«Հայաստանի Հանրապետության կառավարության 2012 թվականի դեկտեմբերի 27-ի N 1691-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծ

ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ_

« » « » 2025 թվականի N ..... -Ն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2012 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 27-Ի N 1691-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի և 34-րդ հոդվածի 1-ին մասի պահանջներով՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը **ո ր ո շ ու մ է**.

1. Հայաստանի Հանրապետության կառավարության 2012 թվականի դեկտեմբերի 27-ի «Սոցիալական փաթեթի հատկացման կարգը և փաթեթի մեջ մտնող ծառայությունների բովանդակությունը հաստատելու, Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի դեկտեմբերի 29-ի N 1917-Ն և N 1923-Ն, ինչպես նաև 2012 թվականի ապրիլի 19-ի N 594-Ն որոշումներն ուժը կորցրած ճանաչելու մասին» N 1691-Ն որոշման N 1 հավելվածի 2-րդ կետի՝

1) 5-րդ ենթակետի «ե.» պարբերության «մարզպետարաններ» բառը փոխարինել «մարզպետների աշխատակազմեր» բառերով.

2) 6-րդ ենթակետում՝

ա. «ժդ» և «ժե» պարբերություններն ուժը կորցրած ճանաչել.

բ. «լբ» պարբերության «արդարադատության» բառը փոխարինել «առողջապահության» բառով.

գ. «լգ» պարբերության «Կոնդի» բառը փոխարինել «Կառավարական» բառով.

դ. «խա» պարբերության «Երևանի պետական մանկավարժական համալսարանի N 57» բառերը փոխարինել «Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի» բառերով.

ե. լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր՝ «խդ»- «ծբ» պարբերություններ.

«խդ. Հայաստանի կինոյի հիմնադրամը,

խե. «Հայոց ցեղասպանության թանգարան-ինստիտուտ» հիմնադրամը,

խզ. Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի հենակետային N 57 հիմնական դպրոցը,

խէ. Հայաստանի ազգային ագրարային համալսարանի վարժարանը,

խը. Վանաձորի պետական համալսարանի հենակետային վարժարանը,

խթ. Հայաստանի ազգային պոլիտեխնիկական համալսարանի Վանաձորի մասնաճյուղի ավագ դպրոցը,

ծ. Շիրակի Մ. Նալբանդյանի անվան պետական համալսարանի ավագ դպրոցը,

ծա. Հայաստանի ազգային պոլիտեխնիկական համալսարանի Գյումրու մասնաճյուղի ավագ դպրոցը,

ծբ. Հայաստանի ազգային ագրարային համալսարանի հանրակրթական ծրագրերի ուսուցման վարժարանը.»։

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից, բացառությամբ սույն որոշման 1-ին կետի 2-րդ ենթակետի «դ» և «ե» պարբերությունների, որոնք ուժի մեջ են մտնում 2025 թվականի հուլիսի 1-ից։